

« ԶՄասեաց Աղաանայն պատուականորիւն յարգեմք. զյորդորանս սիրոյ եւ միաբանութեան մի դադարեցուցանէք ի նմա, եւ զօգուտս կրթութեան եւ լուսաւորութեան քարոզեցէք միշտ. այսոցիկ յոյժ պէտս ունին մերայիւրք : Առ ի ընդարձակել զընթերցանորիւն ամսաբերքիս յազգի մերում, առաջարկեցէք խնամակալաց ժողովոյն զի զմի մի օրինակս ընդունել տացեն ամենայն ուսումնարանաց մերոց որ ի Կոստանդնուպօլիս, եւ երբ գտանիցին ի նոսա անկարողս վճարելոյ զգինն, կամ քանի մի ազգասիրաց վճարել տացեն զայն, եւ կամ ճրի առաքեցէք կարօտելոց զպրատանց, զի աշակերտք օգտեսցին անտի :

« Փամ է արդ վախճան դնել Երկարաբանութեանս , զոր կնքեմ յայտնելով զյոյս իմ Էս . զսաստիկ փափար տեսանելոյ զԴերապատիս . Հայրդ ի Կոստանդնուպօլիս , Էս . բերանացի յայտնելոյ զյարգանս իմ . Էս . ոչ սխալիմ երբեւաքեմ բէ այս յոյս Էս . փափար ոչ Էն սահմանեալ յիս միայն : Վայելեցար ի սեր Տ . Ամբրոսեայ Էս . յառետ յայն Տ . Գաբրիելի , ճերմոյ մնամբ կարօտեալ :

« Հռակ ապա եկեաց շրջան Տ. Խորենայ, որ բեպետ
նորագուն վասն մեր եւ երիտասարդագուն բան զերե-

սեանդ իցէ, զմեռն անուանակցին նորոգէ զյիշատակ
գրչին համբաւեալ ազնուութեամբն :

« ԶՏեանն Գաբրիէլի ի Փէրրպօրկ հրաւիրանս լուար ուրախալի տրտմութեամբ կամ տրտմալի ուրախութեամբ (էրէ ներէյի իցեն հաւկամիտ բանքս) . ուրախանամք զի ճանապարհորդութիւնն մեծամեծ ազգօգուտ ակնկալութիւնս տալ, Եւ տրտմիմք զի զնոյն ինքն ի մենք հեռացուցանէ առժամանակ մի :

« Մաղթեմ ի Տեառնէ նմա եւ մեզ ամենեցուն բարեբաատիկ յաջողութիւնս, եւ քաջառողջ կեանս երկարս, եւ մնամ խորին յարգանքս եւ լաւետ ակնածութեամբ

Ողջուն լարգանաց Գալֆայեան հարազատ վարդապետաց.

4. Գերապատույնի մերում

« Խոնարհ ծառայ
ԳՐԻԳՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ :

« Յ. Գ. Լուեալ է իմ քե ազգային ժողով մի հաստատեալ ունին աշակերտող, համեստիք առաքել առ իս զօրինակ մի ներքին կանոնաց ժողովույր : Նաեւ զցուցակ մի ժամակարգութեանց դասուց, կերակրոյ, հանգստեան եւ զքօսանաց եւ աղօրից եւ այլն : »

ԱՐԳԱՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Այս օրերս Փարիզու մեջ մարդուն մեկուն գրա-
պանակը փողոցի մը մեջ ծոցէն կիյնայ, յորում
100,000 ֆրանք կայ եղեր : Այ կրնան ընբերցողք
մտածել քէ ինչ մեծ եղած է սրտին ցան ու յու-
սահատուրիւնը երբոր զիտնան 'որ բոլոր ունեցած
հարստութիւնն այն էր, եւ շահու դնելու կը-
տանի եղեր :

Նոյն օրն ալ իր բարեկամներն ու ազգականները տունը կերակուրի հրաւիրած է եղեր։ Ամեն շանք կընէ որ անմխիթար տրտմութիւնը անոնց չիմացընէ։ Կերակուրի կընստին, եւ մէկուն մտքէն չանցնելով որ տանուտիրոջը գլուխն այնպիսի մեծ դժբաղդութիւն եկած է, կըսեն կըլսնտան։ Սեղանէն ելլելու ատեննին ծառան կուգայ Պ. Ա...ին կըսէ որ մատաղահասակ գեղացի աղջիկ մը եկեր կաղաչէ որ զինքը վայրկեան մը տեսնէ, եւ ըսելիքն չուզեր ամիսնէին ուրիշի ըսել։ Պ. Ա. առանց ամիսնէին մտքէն բան մը անցընելու, մեքենայաբար կելլէ սեղանէն անդատակը կելլէ ուր իրեն կըսպասէր տասնընինգ տասնըվեց տարեկան համեստունի մը, որ

զՊ. Ա...ն տեսնելուն պէս քովը կուգայ, եւ սիրելի պարզութեամբ մը « Դեմքեղ կերեալ, կըսէ, որ տրտում ես. եկայ որ զքեզ ուրախացունեմ : » Այս կըսէ ու զրպանեն կորսուած գրապանա-կը կըհանէ Պ. Ա...ին կուտայ, որ ուրախու-րենեն խելքը զլխէն կերբայ. մէկէն կըքաշէ զինքը կըգրկէ, ձեռքէն կը բռնէ սրահը կըտանի եւ բոլոր հրաւիրելոց զինքը ցուցնելով հրճուալից ձայնիւ « Ուրախակից եղէք ինծի, ուրախակից եղէք, բարեկամք, կըլանէք. տեսէք սա աղջիկը. կեանքս ու երջանկութիւնս կորսնցուցեր էի. ահա ինքը նորէն զանոնք ինծի դարձուց : » եւ պատմեց իրենց քէ ինչպէս բոլոր ունեցածը կոր-սնցուցեր, եւ այսպիսի հրաշքով գտեր էր :

Ծաղկահատակ եւ արդարասերն Մարիամ, աղքատ այրի կնոջ մը դուստր էր եւ Փարիզու մօտ գեղ մը կըրնակէր : Նոյն օրը հարկաւոր բանի մը համար Փարիզ եկեր էր, եւ փողոցէ մը անց-նելու ժամանակ զրապանակը գտեր էր : Բացեր նայեր է որ մէջը շատ մը բոքրադրամ (հարիւր հազար ֆրանքի) եւ մէկ նամակ մը կայ. այն նա-

մակին վրայ եղած հասցեով իմացեր է Պ. Ա...ին տունը, եւ շիտակ առեր հոն բերեր է որ իրեն յանձնէ :

Պ. Ա. ի նշանակ երախտագիտութեան իւրոյ՝ Մարիամին տարին 500 ֆրանք եկամուտ կապեց, 500 ֆրանք ալ տարեկան վարձք խոստացաւ քե որ քովը ծառայութեան մտնէ : Աւստի որ խեղճ աղջիկը չկրցաւ երկար ժամանակ իր նոր բաղդը վայելել. կարճատեւ հիւանդութեամբ մը վախճանեցաւ : Բայց Պ. Ա. իր երախտագիտութեան պարտքը Մարիամին մահուամբը հատուցած չհամարելով՝ անոր կապած եկամուտը աղքատ մօրը վրայ դարձուց, որպէս զի մինչեւ մահը հանգիստ ապրի, եւ այնպիսի առաքինի գաւկի մայր ըլլալուն վրայ ուրախանայ :

Մարիամին նման առաքինի ու արդարաւոր անձինք ճիշդապէս սակաւաբիւ են, որ այսպիսի դիպուածոց մէջ իրեն պէս մտածեն ու գործեն :

ՍԵՆԻ ԼԵՐԱՆ ԾԱՅՈՒՆԷԸ. — Սարտենիոյ տէրութիւնը Խտալիոյ Գաղղիոյ հետ ունեցած հաղորդակցութիւնը դիւրացընելու համար շատոնց կրփափաքէր Սընի կամ Կենեսոս ըսուած լեռը ծակել. եւ իւր այս գովելի եւ բազմօգուտ փափաքն ի գործ դրաւ ամսոյս ձին փառաւոր հանդիսիւ, զոր այսպէս կըստորագրէ *զաղղիա-խտալական Սորենդակ* կոչուած օրագիրը :

« Ըստ բազում գլխոց օգտակար դիպուած մը, մանաւանդ անոր համար որ Գաղղիոյ եւ Խտալիոյ յարաբերութիւններն աւելի պիտի շատցընէ, կատարեցաւ սեպտեմբերի 1 ին. կուգեմք խօսիլ Սընի լեռան ծակուելուն առաջին ականին ճաքելուն եւ Վիկտոր-Էմմանուէլ երկաթուղոյն նաւակատեացը վրայ : Այս երկաթուղին ճշմարիտ Գաղղիա-խտալական գիծն է, որով եւ ամենէն աւելի մեր մտադրութեանն արժանի :

« Այս հանդէսն իր օգտակարութեանը վայելուց մեծաշուք հանդիսիւ կատարեցաւ, եւ Վիկտոր-Էմմանուէլ քաղաւորն ու Նափոլէոն Իշխանը, Պ. Բավուր, Պ. Փալեքափա, Պ. Նէկրի եւ այլ մեծապատիւ անձինք ներկայ էին :

« Սընի լեռան ստորոտը դրած էր ելեկտրական գործիք մը, եւ 800 մեքր երկայնութիւն ունեցող քելովականներուն պատրոյգներուն հաղորդուած էր, որ հսկայածեւ ստորուղոյն առաջին քարը պիտի ցատքեցընէին : Երկու ելեկտրական քելերէն մէկուն Վիկտոր-Էմմանուէլ քաղաւորն ու միւսոյն Նափոլէոն Իշխանը կրակ տուին, եւ գործողութիւնը ամենայն յաջողութեամբ կատարեցաւ :

« Սընի լեռան ծակուելը արդի գիտութեան ամենէն զօրաւոր եւ ամենէն փառաւոր գործոց մէկը պիտի ըլլայ : Տնտեսութեան կողմանէ ալ մեծամեծ պիտի ըլլան իւր արգասիքը, վասն զի Սալոյիոյ ձորերուն եւ Փիեմոնթի դաշտերուն մէջ տեղն եղած օարերը կամ բարձրութիւններն 800 մեքր ցածընելով՝ վաճառաց փոխադրութեան մէջ իւրաքանչիւր տակառաջափին 30 ֆրանք խնայութիւն պիտի մատուցանէ . Լոնտրայի, Փարիզու, Ճինեւրայի, Թուրինի, Միլանի, Ճենովայի եւ Խտալիոյ ամենէն զուարճալի եւ կարճ ճամբան ալ ուղեւորաց առջեւը պիտի բանայ :

« Ստորուղոյն երկայնութիւնը պիտի ըլլայ 12 հազարմեքր. քուարցի եւ գաճի կարգերուն մէջէն անցնելուն համար փորուիլ մեծ աշխատանքի կարօտ է, ուստի եւ ճարտարահնար եւ զօրաւոր ջրարաշխական մեքենաներ ի գործ պիտի դրուին : Այս հրաշալի ձեռնարկութիւնը եօքը տարուան մէջ պիտի լմըննայ, եւ քառասուն միլիոն ֆրանք պիտի երբայ, Սարտենիոյ տէրութիւնը քսան միլիոն պիտի տայ . քսան միլիոն ալ Վիկտոր-Էմմանուէլ ըսուած Ընկերութիւնը : »

ՆԱԽԱԳԱՇԱՐՈՒՄԸ. — Գաղղիացոց ռամկին կամ հասարակ ժողովրդեան մէջ ուրբաք օրուան վրայ եղած նախապաշարմունքը փոքր ի շատեւ Յուլիսի բերքին մէջ յիշատակեցինք. բայց ուրիշ շատ պաշարմունքներ ալ կան, որ գուցէ եւ ոչ մեր ամենատգետ սեպուած հասարակ ժողովրդեան մէջ կը գտնուի. անոնցմէ մէկը միայն յիշեմք որ նոր այս օրերս պատահեցաւ : Գեղի մը մէջ կայծակէն տուն մը կըրոնկի. կրակը տեսնելուն պէս յիսուն հոգի կըմագնէ, օգնութեան կուգան. բայց երբոր կիմանան քէ կրակը երկնքէն իջած է, մէկէն մտքերնին կուգայ այն մոլար կարծիքնին քէ երկնքէն իջած կրակը ջմարիւր, եւ ո՞վ որ մարելու կաշխատի, նոյն տարւոյն մէջ կըմեռնի, ամենքը կըքաշուին կեքքան. այնպէս որ գեղին զգիրը երբոր վրայ կըհասնի, հազիւ տասը հոգի կըգտնէ, եւ անոնց անձամբ ցուցընելով որ երկնքի կրակն ալ կրնայ մարիլ, բռնութեամբ քիչ մը ձեռնտրութիւն կըգտնէ խեղճ տունը բոցներու կատաղութենէն ազատելու :

Propriétaire-gerant : A. LACHAT

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵՆՆԸ .